

Փոքր կաթնասունների նույնականացումն ու մոնիթորինգը

Կարճ ակնարկ

Փոքր կաթնասունները կարող են նույնականացվել և մոնիթորինգի ենթարկվել կյոռ տարին, սակայն պետք է հաշվի առնել ճմեռային քունն ու խիտ ձնածածկույթը: Չնայած փոքր կաթնասունների մոնիթորինգի ամենաձախսարդյունավետ մեթոդներից մեկը դրանց թակարդով որսալն է, ավելի ամբողջական վերլուծություն իրականացնելու նպատակով այն պետք է զուգակցվի այլ մեթոդների հետ: Տեսակի մոնիթորինգի մեթոդը պետք է ընտրել՝ հիմնվելով տեսակի էկոլոգիայի և տարածվածության վրա:

Մեթոդներ

Թակարդներ. փոքր կաթնասունները հաճախ նույնականացվում են թակարդների միջոցով: Թակարդները իրենցից ներկայացնում են տեսակների գոյությունը, ինչպես նաև պոպուլյացիաների չափը գնահատելու կյոռ տարին կիրառման ենթակա ծախսարդյունավետ մեթոդ: Տեսակներին կենդանի վիճակում բռնելու համար նախատեսված թակարդները խորհուրդ են տրվում, որովհետև դա նվազագույն ազդեցություն է ունենում պոպուլյացիաների վրա: Տարեկան թակարդում կենդանիներին որսալու 2-3 ժամանակահատվածը՝ 5 օր տևողությամբ, տեղեկություններ է տրամադրում հիմնական տեսակների և որոշ տեղեկություններ պոպուլյացիայի չափի ու տատանումների վերաբերյալ: Թակարդների թիվը կարող է տատանվել 20-60-ի միջակայքում՝ կախված տարածքի

չափից և ապրելավայրերի բազմազանությունից: Տեսակներին կենդանի վիճակում բռնելու համար նախատեսված թակարդները պետք է ստուգել առնվազն օրը մեկ անգամ:

Ձայնային սենսորներ. Ձայնային սենսորներն օգտագործվում են կենդանիների արձակած ազդանշաններն արձանագրելու և նույնականացնելու նպատակով (սովորաբար կիրառվում են չղջիկների տարբեր տեսակների համար): Շարժական դետեկտորները հաճախ միացվում են պարաբոլիկ ակտիվացնողներին՝ թույլ տալով զգայուն ազդանշանների ավելի մանրակրկիտ նույնականացումը: Ավտոմատ դետեկտորները կարելի է միևնույն տարածքում մի քանի անգամ տեղադրել, ինչը թույլ կտա համեմատել տարբեր տարիները արդյունքները: Ներկայում հատուկ ծրագրեր կան, որոնք ձայնագրությունների հիման վրա ավտոմատ նույնականացնում են տարբեր տեսակներին: Ձայնային դետեկտորները տեղադրելիս չափազանց կարևոր է հաշվի առնել տեսակին բնորոշ էկոլոգիան և ապրելավայրի պահանջները (մասնավորապես դետեկտորների ցածր տիրույթի պահառով):

Հետքեր և այլ նշաններ. ձյան կամ գետնի վրայի հետքերի կամ այլ նշանների նույնականացումը ամբողջ տարին կիրառվող ծախսերի տեսանկյունից արդյունավետ մեթոդ է և կարող է արժեքավոր գիտելիքներ հաղորդել առանձին շարժերի նկատմամբ:

Թակարդ տեսախցիկներ/Ֆոտոխցիկներ. Թակարդ տեսախցիկները/ֆոտոխցիկները մոնիթորինգի են ենթարկում որևէ կոնկրետ հատված, և երբ այդ հատվածում շարժ է նկատվում, դրանք լուսանկար կամ կարճ տեսանյութ են նկարում: Փոքր կենդանիներին հայտնաբերելու հետ կապված սահմանափակումների պատճառով պետք է չափազանց մեծ զգուշությամբ

մոտենալ տեսախցիկի/ֆոտոխցիկի տեղադրման հարցին: Թակարդ տեսախցիկները/ ֆոտոխցիկները կարող են երկար ժամանակահատվածում ամենատարբեր միջավայրերում, նույնիսկ բացարձակ մթության մեջ ինքնուրույն աշխատել, դրանք նույնիսկ կարող են արված նկարներն անմիջապես ուղարկել որևէ կայքի կամ հեռախոսի: Թակարդ տեսախցիկները/ֆոտոխցիկները, օրինակ, տարբեր սեզոններին միգրացիայի և սննդի հայթայթման վարքագծում առաջ եկած փոփոխությունների, պոպուլյացիայի չափի, անհատական վարքագծի մոնիթորինգի աննկատ մեթոդ են հանդիսանում:

Կղանք և այլ մնացորդներ. որոշ տեսակների կարելի է նույնականացնել կղանքի տեսողական զննությամբ: Մեքենայի տակ ընկած կենդանիների մնացորդները կարող են արժեքավոր տվյալներ փոխանցել, որոնք էլ կարող են օգտագործվել պոպուլյացիաների վերաբերյալ գնահատականներն ամրապնդելու և հանդիսանալ միգրացիայի ու կենսագործունեության վերաբերյալ ցուցիչներ:

Որս. որսի գործողությունները պետք է արձանագրվեն՝ որսի տեսակների խտության վերաբերյալ անուղղակի տվյալներ տրամադրելու նպատակով: Կարելի է նաև նմուշներ ուղարկել հետազոտական հաստատություններ, որտեղ մասնագետները կարող են արժեքավոր գիտելիք տրամադրել, օրինակ, տեսակների ունեցած վարակների կամ մակաբույծների մասին:

ԴՆԹ, շմԴՆԹ. ԴՆԹ (արյուն, կղանք, այլ մնացորդներ) կամ շմԴՆԹ պարունակող նմուշները կարող են օգտագործվել տեսակներին կամ նույնիսկ առանձնյակներին նույնականացնելու նպատակով: ԴՆԹ կարելի է վերցնել կղանքի նմուշներից՝ միաժամանակ մի քանի տեսակի գոյությունը պարզելու նպատակով: Այն

մոնիթորինգի ծախսարդյունավետ և ոչ ինվազիվ եղանակ է, սակայն կարող է նաև օգտագործվել պոպուլյացիաների կենսունակությունը գնահատելու նպատակով (օր.՝ որքանով է առկա պոպուլյացիայի ազգակցական ձևերի տրամախաչում (ինբրիդինգ)):

Չղջիկների մոնիթորինգ

Ձայնային դետեկտորների կիրառմամբ չղջիկների մոնիթորինգը պետք է բոլոր համապատասխան ապրելավայրերում կրկնվի մեկ սեզոնի ընթացքում 3-5 անգամ՝ առաջնահերթությունը տալով այն ապրելավայրերին, որոնք օգտագործվում են չղջիկների կողմից որպես իրենց տարածք և սննդի հայթայթման տարածք: Գարնանն ու աշնանն իրականացվող մոնիթորինգը կարող է լրացուցիչ տեղեկություններ հաղորդել միգրացիոն ուղիների և ձմեռման տեղանքների մասին: Չղջիկներին պետք է նույնականացնել և մոնիթորինգի ենթարկել նաև դրանց հավաքատեղիներում՝ և՛ ցերեկային թաքստոցներում (քարանձավներ, սնամեջ ծառեր, հին շենքեր և այլն), և՛ ձմեռման տեղանքներում: Այս տարածքները այնպիսի տվյալներ են տրամադրում, որոնք հնարավոր չէ ստանալ ձայնային ազդանշանների միջոցով (օր.՝ պոպուլյացիայի ճշգրիտ քանակը, սերնդի թիվը և այլն):

Փոքր կաթնասունի դեպքի ուսումնասիրություն

Հարավային պայտաքիթ, (*Rhinolophus euryale*)

ԲՊՄՄ (IUCN) կարգավիճակը Եվրոպայում՝ խոցելի (VU) Իրավական կարգավիճակը ԵՄ-ում՝ Միջավայրերի հրահանգ, Հավելվածներ II և IV, Բեռնի կոնվենցիա, Հավելված II:

ԲՊՄՄ կարգավիճակը Հայաստանում՝ Վտանգված (EN) Ինչպես հաշվառել և մոնիթորինգ կատարել: ձայնային սեսորներ, այլ նշաններ, թակարդ տեսախցիկներ:

Երբ հաշվառել և մոնիթորինգ կատարել Կլոր տարին:



Հարավային պայտաքիթ (*Rhinolophus euryale*).
Լուսանկարը՝ Ժուլիեն Ռենոյի (CC BY 4.0).

Փոքր կաթնասունի դեպքի ուսումնասիրություն

Փոքր ճագարամուկ, (*Allactaga elater*)

ԲՊՄՄ (IUCN) կարգավիճակը Եվրոպայում՝ քիչ մտահազոդ (LC) Իրավական կարգավիճակը ԵՄ-ում՝ - ԲՊՄՄ արգավիճակը Հայաստանում՝ Վտանգված (EN)

Ինչպես հաշվառել և մոնիթորինգ կատարել՝ թակարդներ, այլ նշաններ, թակարդ տեսախցիկներ: Երբ հաշվառել և մոնիթորինգ կատարել՝ կլոր տարին



Փոքր ճագարամուկ (*Allactaga elater*).
Լուսանկարը՝ Պահամ Վիհաֆի (CC BY-NC 4.0).